

**Արարողության ավարտին ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց
Գարեգին Տ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:**

«Այս թանգարանի հիմնումը հարգանքի տուրք է խոնարհում է ինչպես Ռուբեն Սևակին, այնպես և Գրիգոր Զոհրապին, Միսմանթոյին, Վարուժանին, Կոմիտասին, մեր մյուս մեծերին, մեկ և կես միլիոն մեր անմեղ գոհերին, ովքեր չուրացան իրենց հավատքն ու հայրենիքը և ընդունեցին նահատակության պսակը: Նրանք նահատակվեցին իրենց սրտում վառ պահելով տեսիլքը, որ ապրելու և հարատևելու է հայ ժողովուրդը: Թանգարանը նվիրվում է Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի ոգեկոչմանը և ունի առանձնահատուկ նշանակություն: Այն այցելուների միջոցով վերածվելու է դողանջող անլուելի զանգակատան, որի ձայնը լսելի պիտի լինի աշխարհում՝ նպաստելով Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերին:

Թանգարանը դառնում է անցյալի, ներկայի և գալիքի մեջ անմահության ձայն, մահվանից վերածնվելու, նորից հառնելու և կյանքով հաղթելու ուղի: Այսօր մենք քննադատությանն ենք պատասխանում ևնք մեր ժառանգյալի ազնիվ զավակի ու նահատակի հիշատակը հավերժացնելով, կործանմանը պատասխանում ենք կառուցումով, ավերմանը՝ վերաշինությամբ, մահվանը՝ կյանքով: Չարին բարիով պատասխանելու քրիստոնեական այս ոգին դարձել է մեր ժողովրդի նկարագիրն ու էությունը, որը միշտ գորացնելու է մեզ՝ ապրելու և արարելու: Ինչպես մեր նահատակ մեծ բանաստեղծ Ռուբեն Սևակն է ասել՝ «...ո՛վ որ Կեանքին հաւատքն ունի՝ երկինքեն բռնուելիք չուան մ'ունի: Ո՞վ որ Յաղթութեան յոյսն ու Երջանկութեան սերն ունի՝ ան իր ուսերուն վրայ երկու թուեր ունի ...»», - ասաց Նորին Սրբությունը:

Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը բարձր գնահատանք հայտնեց մեծարգո տիար Զիլինգիդյանին՝ սիրահոծար հանձնառության, նախանձախնդիր ոգու և ազնիվ բարերարության համար: «...Իրականացավ տարիների Ձեր երազը, մեծարգո բարերար, ազգիս սրբություն սրբոց Սուրբ Էջմիածնում, Ղազարապատի պատմական կառույցում հաստատվեց Ռուբեն Սևակի թանգարանը, որը Վազգեն Կաթողիկոսի կողմից կառուցված Հայոց Ցեղասպանության հուշարձանի հետ, իբրև խնկարկում՝ լուսավոր է պահելու Եղեռնի նահատակների հիշատակը, մեր արդար դատը պաշտպանելու ոգին և մեր ժողովրդի անմահության խորհուրդը», - նշեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց նաև թանգարանի բացման աշխատանքներում իրենց ներդրումն ունեցած բոլոր անձերին, ապա աղոթքով բարի և արդյունավոր ընթացք մաղթեց թանգարանի առաքելությանը: